

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառությունը և դրանց չարաշահումը լուրջ վտանգ են ներկայացնում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ազգային անվտանգությանը, ժողովրդի առողջությանը և բարեկեցությանը,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների անօրինական շրջանառության դեմ պայքարում համագործակցության մասին 2000 թվականի նոյեմբերի 30-ի Համաձայնագրի և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառությանը հակազդող 2012 թվականի հոկտեմբերի 7-ի Հայեցակարգի նպատակներից,

ընդունելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության դեմ արդյունավետ հակազդեցությունը պահանջում է Կողմերի տեղեկատվական համագործակցության ամրապնդում,

ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներով և նորմերով,

**համաձայնեցին հետևյալի մասին.**

#### **Հոդված 1**

Սույն Համաձայնագրի առարկան է անօրինական շրջանառությունից առգրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի (այսուհետ՝ թմրանյութեր) և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգը՝ իրակացնելու համար օպերատիվ հետախուզական միջոցառումներ, ապահովելու համար համեմատական քրեագիտական ուսումնասիրության անցկացումը, ինչպես նաև գիտական և ուսումնական նպատակներով:

#### **Հոդված 2**

Կողմերի իրավասու մարմինները կարող են իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումների, հետաքննության, քննչական գործողությունների ընթացքում առգրավված, ինչպես նաև այլ ճանապարհով ձեռք բերված թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնում:

Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրի՝ իր համար ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում կորոշի իրավասու այն մարմինների

ցանկը, որոնց վրա կդրվի դրան իրականացումը և այդ մասին կտեղեկացնի ավանդապահին:

Սույն Համաձայնագրի կատարման նպատակներից ելնելով՝ Կողմերի իրավասու մարմինները համագործակցում են միմյանց հետ անմիջականորեն, ինչպես նաև դիվանագիտական ուղիներով նամակների փոխանակման միջոցով:

### **Հոդված 3**

Կողմերի իրավասու մարմինների կողմից թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների փոխանակումն իրականացվում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի համաձայն:

Թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը սույն Համաձայնագրի մասնակից պետությունների պետական (մաքսային) սահմաններով, ինչպես նաև սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքով տարանցումով տեղափոխումն իրականացվում են առաջնահերթության (նախապատվության) կարգով: Այդ դեպքում որպես մաքսային հայտարարագիր կարող են օգտագործվել տրանսպորտային (փոխադրական), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր՝ պայմանով, որ մաքսային մարմիններին տրամադրվող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հաշվառման քարտերը ձևակերպված լինեն սույն Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հավելվածներին համապատասխան:

Տեղափոխվող թմրանյութերն ու դրանց պրեկուրսորների նմուշներն ազատվում են մաքսային զննումից՝ պայմանով, որ պահպանված լինեն սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով նախատեսված դրույթները:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է միջոցներ ձեռնարկել պետական հսկողության ներքո գտնվող թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը պարզեցնելու համար:

### **Հոդված 4**

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների՝ աջակցություն ցուցաբերելու նպատակով կատարված հարցումների հիման վրա (այսուհետ՝ հարցում):

Հարցումն ուղարկվում է գրավոր և պետք է ներառի.

ա) հարցում կատարող և հարցում ստացող Կողմերի իրավասու մարմինների անվանումները,

բ) գործի բովանդակության շարադրումը,

գ) հարցման նպատակն ու հիմնավորումը,

դ) հարցվող աջակցության բովանդակությունը,

ե) հարցման կատարման ժամկետը:

Կողմերը կարող են տրամադրել լրացուցիչ օգտակար տեղեկություն հարցումը կատարելու համար:

Հարցումը ստորագրվում է իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից և վավերացվում է կնիքով:

### **Հոդված 5**

Հարցում ստացող Կողմի իրավասու մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման՝ ժամանակին, ամբողջական և որակյալ կատարումն ապահովելու համար:

Հարցման կատարմանը խոչընդոտող կամ կատարումը զգալիորեն հետաձգող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացվում է հարցում կատարող Կողմի իրավասու մարմինը:

Եթե հարցում ստացող Կողմի իրավասու մարմինը համարում է, որ հարցման կատարումը կարող է խանգարել սույն Համաձայնագրի՝ հարցում ստացող մասնակից պետության տարածքում իրականացվող քրեական կամ այլ վարույթի իրականացմանը, ապա նա կարող է հարցում կատարող Կողմի իրավասու մարմնի հետ խորհրդակցելուց հետո հետաձգել հարցման կատարումը կամ դրա կատարումը կապել որպես անհրաժեշտ ճանաչված պայմանների պահպանման հետ:

Եթե հարցում կատարող Կողմի իրավասու մարմինն ընդունում է հարցում ստացող Կողմի իրավասու մարմնի աջակցությունն այդպիսի պայմաններով, ապա այդ պայմանները պետք է պահպանվեն:

### **Հոդված 6**

Հարցում ստացող Կողմի իրավասու մարմինը կարող է խնդրանքով դիմել հարցում կատարող Կողմի իրավասու մարմնին այն մասին, որ սույն Համաձայնագրին համապատասխան ստացված հարցման կատարման արդյունքները չհրապարակվեն կամ գործածվեն միայն այն պայմաններով, որոնց շուրջ իրենք կպայմանավորվեն: Եթե հարցում կատարող Կողմի իրավասու մարմինը կատարված հարցման արդյունքներն ընդունում է այդպիսի պայմաններով, ապա պետք է պահպանի այդ պայմանները:

Սույն հոդվածի դրույթները չեն բացառում կատարված հարցման արդյունքների օգտագործումն այլ նպատակների համար, եթե սույն Համաձայնագրի հարցում ստացող մասնակից պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված է նման կերպ գործելու պարտավորություն: Այդ դեպքում հարցում կատարող Կողմի իրավասու մարմինը հարցման մեջ պարտադիր տեղեկացնում է հարցում ստացող Կողմի իրավասու մարմնին կատարված հարցման արդյունքների՝ այդպիսի հնարավոր և ենթադրվող օգտագործման կամ կատարված հարցման արդյունքների հրապարակման մասին:

Հարցում ստացող Կողմի իրավասու մարմինն իրավունք ունի մերժելու հարցում կատարող Կողմի իրավասու մարմնի՝ կատարված հարցման արդյունքները հարցման մեջ չնշված նպատակով օգտագործելու խնդրանքը:

### **Հոդված 7**

Սույն Համաձայնագրի շրջանակներում աջակցության ցուցաբերումը կարող է մերժվել ամբողջությամբ կամ մասնակի, եթե հարցում ստացող Կողմը համարում է, որ հարցման կատարումը կարող է վնաս հասցնել իր պետական շահերին կամ հակասում է ազգային օրենսդրությանը:

Հարցման կատարումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում հարցում կատարող Կողմի իրավասու մարմինը մերժման պատճառների մասին գրավոր ծանուցվում է ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

Եթե աջակցություն ցուցաբերելու նպատակով հարցում կատարելը չի մտնում հարցում ստացող մարմնի իրավասության մեջ, ապա տվյալ մարմինն այն անմիջապես փոխանցում է հարցում ստացող Կողմի համապատասխան իրավասու մարմնին և այդ մասին տեղեկացնում է հարցում կատարող Կողմի իրավասու մարմնին:

Անհրաժեշտության դեպքում հարցում ստացող Կողմի իրավասու մարմինն իրավունք ունի հարցում կատարող Կողմի իրավասու մարմնից պահանջելու լրացուցիչ տեղեկություն, որն իր կարծիքով անհրաժեշտ է հարցումը կատարելու համար:

### **Հոդված 8**

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում կատարած ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի պայմանավորվում:

Կողմերն անհրաժեշտության դեպքում կարող են միմյանց տրամադրել անհատույց օգնություն՝ ելնելով սույն Համաձայնագրի իրականացման նպատակներից:

### **Հոդված 9**

Կողմերի իրավասու մարմինները համագործակցության ընթացքում որպես աշխատանքային լեզու գործածում են ռուսերենը:

### **Հոդված 10**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ժամանակ Կողմերի միջև ծագած ցանկացած վիճելի հարց լուծվում է շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգի միջոցով:

### **Հոդված 11**

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, այդ թվում քրեական գործերով իրավական օգնության, որոնց մասնակիցներն են հանդիսանում նրանք:

## **Հոդված 12**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին այն ստորագրած Կողմերի կողմից երրորդ գրավոր ծանուցագիրն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգն ուշ կատարած Կողմի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցագիրն ավանդապահին հանձնելու օրվանից:

## **Հոդված 13**

Սույն Համաձայնագրում փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն համապատասխան արարողակարգով:

## **Հոդված 14**

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու ժամկետից ոչ պակաս, քան վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին, կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ ծագած պարտավորությունները:

## **Հոդված 15**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է դրա նպատակներն ու սկզբունքներն ընդունող ցանկացած պետության համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու միջոցով:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի ստանալուց 30 օր հետո:

Այն պետությունների համար, որոնք Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից չեն, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից համաձայնության վերաբերյալ այն ստորագրած կամ դրան միացած բոլոր պետությունների կողմից այդպիսի միացման մասին վերջին ծանուցագիրը ստանալուց 30 օր հետո:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 2011թ. հոկտեմբերի 18-ին, ռուսերենով, մեկ օրինակով: Բնօրինակը պահվում է ԱՊՀ Գործադիր կոմիտեում, որն էլ սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Աղբբեջանական Հանրապետության  
Կառավարության կողմից  
(վերապահումով)  
/ստորագրություն/**

**Ռուսաստանի Դաշնության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Հայաստանի Հանրապետության  
Կառավարության կողմից  
(վերապահումով, առարկությամբ)  
/ստորագրություն/**

**Տաջիկստանի Հանրապետության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Բելառուսի Հանրապետության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Թուրքմենստանի  
Կառավարության կողմից`  
-----**

**Ղազախստանի Հանրապետության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Ուզբեկստանի Հանրապետության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Ղրղզստանի Հանրապետության  
Կառավարության կողմից  
(վերապահումով)  
/ստորագրություն/**

**Ուկրաինայի  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

**Մոլդովայի Հանրապետության  
Կառավարության կողմից  
/ստորագրություն/**

*Հավելված 1  
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի  
և դրանց պրեկուրսորների նմուշների  
հանձնման կարգի մասին  
Համաձայնագրի  
18-ը հոկտեմբերի, 2011 թ.*

**ԿԱՐԳ  
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց  
պրեկուրսորների նմուշների հանձնման**

1. Թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների հանձնման հիմնական նպատակն է.

հնարավորության ընձեռումը՝ անցկացնել այդ նմուշների համեմատական հետազոտություն՝ հետազայում արտադրության տեղը և եղանակը որոշելու համար, պատկանելությունը նույն խմբաքանակին, դրա տեղափոխման հնարավոր եղանակներն ու ուղիները և այլ նպատակներ՝ թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության դեմ պայքարի շրջանակներում,

անօրինական շրջանառության մեջ գտնվող, դուրս բերվող թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նոր նմուշների փոխանակումը:

2. Թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների փոխանակումն իրականացնում են Կողմերի իրավասու մարմինները՝ հարցման միջոցով:

3. Թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներով իրականացվում է պետական հսկողության ներքո: Այդ նպատակներից ելնելով՝ Կողմերի իրավասու մարմինները համաձայնեցնում են թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների փոխադրումն իրականացնող անձանց ցուցակը, սույն Համաձայնագրի մասնակից պետությունների պետական (մաքսային) սահմանների անցակետերը, երթևեկության ուղիները, փոխադրամիջոցները և այլ անհրաժեշտ հարցեր:

Փոխանակման ընթացքում թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման հիմնական պահանջն է հումքը բնութագրող նշանների պահպանության ապահովումը, դրա ձեռք բերման մեթոդները և հնարավորության սահմաններում դրա փաթեթավորումն ու ձևը պահպանելու պայմանների ստեղծումը:

4. Թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշները հնարավորության դեպքում ընտրվում են խոշոր խմբաքանակներից: Օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող առանձին դեպքերում հնարավոր է թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնումն այլ ծավալի խմբաքանակից:

5. Թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների յուրաքանչյուր նմուշի զանգվածը 50 գրամից ավել չի կարող լինել: Օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող առանձին դեպքերում հնարավոր է թմրամիջոցի և դրա պրեկուրսորի նմուշի հանձնման այլ զանգված:

6. Չի թույլատրվում միավորել այն թմրամիջոցները և դրանց պրեկուրսորները մեկ նմուշում, որոնք ունեն արտաքին տեսքի կամ բաղադրության տարբերություն, եթե նույնիսկ դրանք գտնվել են մեկ խմբաքանակում:

7. Թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշները փաթեթավորվում են մաքուր, հիմնական, հերմետիկ փաթեթավորմամբ՝ ապահովելով հուսալի պաշտպանություն արտաքին ազդեցությունից, որից հետո կնքվում են հարցվող Կողմի (ուղարկողի) իրավասու մարմնի կնիքով:

8. Նմուշի տվյալները նշվում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հաշվառման քարտում՝ սահմանված ձևով (հավելված 2):

9. Նմուշի յուրաքանչյուր սկզբնական փաթեթավորում պետք է պիտակավորվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների համար սահմանված ձևով (հավելված 3):

Ամբողջ անհրաժեշտ տեղեկությունը փոխանցվում է առանձին՝ կապի համապատասխան ուղիների օգտագործմամբ:

10. Սկզբնական փաթեթավորումը պարտադիր տեղավորվում է անհատական կամ խմբակային կնքված տրանսպորտային փաթեթավորման մեջ:

11. Ուղեկցող փաստաթղթերը պարունակում են թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների ցանկը՝ նշելով դրանց անհատական համարը և փաթեթավորման ամսաթիվը, թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների արտաքին տեսքի և փաթեթավորման մասին տվյալները, պիտակի վրա տպված կնիքի տեքստը:



Հավելված 2  
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի  
և դրանց պրեկուրսորների նմուշների  
հանձնման կարգի մասին  
Համաձայնագրի  
18-ը հոկտեմբերի, 2011 թ.

**Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների  
հաշվառման քարտ**

1.	Տվյալներ	
1.1.	Գրանցման համարը	----- 20 թ.
1.2.	Քարտը կազմողի անունը, ազգանունը, հայրանունը, գերատեսչությունը, պաշտոնը	
1.3.	Նմուշի համարը (անհատական համար)	
1.4.	Փաթեթավորման ամսաթիվը	
2.	Տեղեկատվություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների վերաբերյալ	
2.1.	Անվանումը	
2.2.	Նմուշի զանգվածը (գրամներով)	
2.3.	Խմբաքանակի առգրավման ամսաթիվը	
2.4.	Առգրավման վայրը	
2.5.	Առգրավումն իրականացնող գերատեսչությունը	
2.6.	Առգրավված ողջ խմբաքանակի զանգվածը	
2.7.	Սուբստանցիայի տոկոսային պարունակությունը	
2.8.	Առգրավված խմբաքանակի փաթեթավորման ձևը և չափը	
3.	Տեղեկատվություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների արտադրման տարածաշրջանի, տեղափոխման երթուղու և եղանակի վերաբերյալ	
3.1	Որ տարածաշրջանից է բերվել (պետություն, մարզ)	
3.2.	Հումքի աճեցման վայրը	
3.3.	Հումքի վերամշակման վայրը	
3.4.	Արտադրության վայրը	
3.5.	Փոխադրման եղանակները	
3.6.	Պահեստավորման վայրը	
	Լիազորված անձի ստորագրությունը	

Հավելված 3  
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի  
և դրանց պրեկուրսորների նմուշների  
հանձնման կարգի մասին  
Համաձայնագրի  
18-ը հոկտեմբերի, 2011թ.

**Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների  
պիտակը**

**Նմուշի համարը**

-----

(անհատական համար)

**Փաթեթավորման ամսաթիվը**-----**բռնագրավման ամսաթիվը**-----

-

**Բռնագրավման վայրը**

-----

**Փաթեթավորեց՝**

-----

ԿՏ

(փաթեթավորման ժամանակ  
օգտագործվող կնիքի տեղ)

-----

(Անուն, ազգանուն, հայրանուն)

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**  
**Ադրբեջանական Հանրապետության**

**2011թ հոկտեմբերի 18-ի՝ Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց արեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին Համաձայնագրի վերաբերյալ**

Բացառությամբ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության:

Համաձայնագրում շարադրված իրավունքներից, պարտականություններից և դրույթներից ոչ մեկը Ադրբեջանական Հանրապետության կողմից չի կիրառվի Հայաստանի Հանրապետության նկատմամբ մինչև Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանական Հանրապետության բոլոր զավթված տարածքների ազատումը և ագրեսիայի բոլոր հետևանքների վերացումը:

**Ադրբեջանական Հանրապետության**  
**Վարչապետի առաջին տեղակալ՝**

**Յա. Էյուբով**

**ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության՝ Ադրբեջանական Հանրապետության**  
**վերապահման դեմ**

Ադրբեջանական Հանրապետության վերապահումը թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց արեկուրսորների նմուշների հանձնման կարգի Համաձայնագրի առնչությամբ, խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության առաջացման պատճառը և էությունը: Հակամարտությունը հետևանք է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ Ադրբեջանական Հանրապետության կողմից իրականացված էթնիկ զտումների քաղաքականության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ սանձազերծած ռազմական ագրեսիայի:

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց արեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին Համաձայնագրի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից չեն կիրառվի Ադրբեջանական Հանրապետության նկատմամբ մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հակամարտության կարգավորումը:

**Հայաստանի Հանրապետության**  
**Վարչապետ՝**

**Տ. Սարգսյան**

## **ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**

**Հայաստանի Հանրապետության՝  
Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների  
հանձնման կարգի մասին Համաձայնագրի 3-րդ հոդվածի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում պահանջելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային հայտարարագիր ներկայացնել թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումով անցման ժամանակ՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան:

**Հայաստանի Հանրապետության  
Վարչապետ՝**

**S. Սարգսյան**

## **ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**

**Ղրղզստանի Հանրապետության**

**Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների  
հանձնման կարգի մասին համաձայնագրի վերաբերյալ**

Ղրղզստանի Հանրապետությունը մասնակից կլինի սույն Համաձայնագրին՝ համապատասխան ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին:

**Ղրղզստանի Հանրապետության  
Վարչապետի պաշտոնակատար՝**

**O. Բաբանով**